ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Հայաստան, 0025, Երևան, Ալեք Մանուկյան փող., 5 շենք,
Հեռ. (+374)10570830, (+374)10554057 Էլ.հասցե hasarakakan.kartsiq@gmail.com

Առաջին ալիքի կերպարի դուրսբերումը երիտասարդների շրջանում

Երևան 2017

Բովանդակություն

Հետազոտության մեթոդաբանության նկարագրություն 3
Տվյալների վերլուծություն 4
Ամփոփում և առաջարկներ 13

Հետազոտության մեթոդաբանության նկարագրություն

«Առաջին ալիքի կերպարի դուրսբերումը երիտասարդների շրջանում» հետազոտությունը նպատակ ունի դուրս բերել երիտասարդների ընկալումներն ու պատկերացումները Առաջին ալիքի վերաբերյալ: Հետազոտության առջև դրված են հետևյալ հարցադրումները՝

- դուրս բերել երիտասարդների կողմից սիրված հեռուստաալիքները,
- դուրս բերել հեռուստաալիքների հետ առկա ասոցացիաները, այդ ասոցացիաների պատճառները,
- դուրս բերել հեռուստաալիքների հանդիսատեսի նկարագրությունը երիտասարդաների պատկերացմամբ,
- պարզել Առաջին ալիքի՝ իբրև հանրային հեռուստաալիք սպասումներն ու վերագրված գործառույթները, համեմատել ներկայիս կատարած գործունեության հետ:

Հետազոտության նպատակից և առկա հարցադրումներից ելնելով՝ ընտրվել է ֆոկուս խմբային քննարկումների մեթոդը: Վերջինս թույլ է տալիս ոչ միայն մի շարք հարցերի շուրջ իրականացնել քննարկումներ մասնակիցների հետ, այլև մասնակիցների միջև ծավալված քննարկումներից դուրս բերել առկա հարցադրումների պատասխանները: Ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցները 18-35 տարեկան երիտասարդներ են, ովքեր ընտրվել են ձնակույտի և սոցիալական ցանցերի միջոցով՝ պահպանելով սեռի և տարիքի չափանիշը:

Տվյալների վերլուծություն

Նախընտրած հեռուստաալիքների ընդհանուր նկարագրություն: Իրականացված ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում դուրս են բերվել երիտասարդների նախընտրած հեռուստաալիքները: Այս հարցի շուրջ ծավալված քննարկումների ընթացքում պարզ դարձավ, որ երիտասարդները հիմնականում չունեն սիրելի հեռուստաալիք, ավելին՝ հեռուստացույցին աստիճանաբար գալիս է փոխարինելու համացանցը: Քննարկմանը մասնակցած երիտասարդները նշում են, որ իրենք կարող են առանձնացնել ոչ թե սիրված, այլ նախընտրած հեռուստաալիք, ինչը խոսում է այն մասին, որ չկա այնպիսի հեռուստաալիք, որին երիտասարդները հետևում են, այլ կա մեկը կամ մի քանիսը, որը/որոնք պարզապես միացնում են ազատ ժամանակ իբրև ժամանցի միջոց: Այսպիսով, քննարկման ընթացքում երիտասարդներն առանձնացրել են ոչ թե սիրված, այլ բոլոր եղածների մեջ նախընտրած հեռուստաալիք(ներ): Վերջիններիս շարքում հիմնականում առանձնացվում են հետևյալ երեքը՝ Արմենիա, Առաջին ալիք և Շանթ: Երիտասարդների կողմից նշվում են նաև արտասահմանյան հեռուստաալիքներ, ինչպիսիք են RU TV, NTV, CNN, սակայն հիմնական դիտվող հեռուստաալիքները վերոհիշյալ երեքն են:[1] Մասնակիցները նշում են, որ վերջին շրջանում հեռուստացույցով հետաքրքիր և իրենց համար գրավիչ ծրագիր չկա և իրենք հեռուստացույց հաճախ դիտում են «պատահաբար», երբ այն պարզապես տանը միացրած է լինում: Հարկ է նշել, որ երիտասարդները տարբերակում են նշված հեռուստաալիքները՝ կախված նրանից, թե ինչ են ցանկանում դիտել: Ժամանցային հաղորդումներ դիտելու համար նշվում են Արմենիա և Շանթ հեռուստաալիքները, իսկ առավել ինտելեկտուալ հաղորդումներ դիտելու համար առանձնացվում է Առաջին ալիքը: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ, թերևս ամենաշատ դիտվող հեռուստաալիքները Արմենիան ու Շանթն է, այնուամենայնիվ դրանք ունեն դիտելիություն այն հիշողությունների շնորհիվ, որոնք առկա են երիտասարդների

[1] Սրա մասին են վկայում նաև 2017 թ. մայիս-հունիս ամիսներին «Հասարակական կարծիքի ուսումնասիրամնա կենտրոն»-ի կողմից իրականացված քանակական հետազոտության արդյունքները, որի համաձայն ամենադիտվող հեռուստաալիքների շարքում առաջին տեղում Արմենիան էր, երկրորդ տեղում՝ Շանթը և երրորդ տեղում՝ Առաջին ալիքը:

մոտ անցյալից, անցյալում ցուցադրվող հաղորդումներից: Այսպես, երիտասարդները և՛ Արմենիա, և՛ Շանթ հեռուստալիքների մասին խոսելիս՝ շեշտադրում են այն հանգամանքը, որ նախկինում դրանք ունեին լավ հաղորդումներ, սակայն այսօր կորցնում են իրենց հետաքրքրությունը և շատ հաճախ դիմում են կրկնության՝ եթերը հագեցնելու նպատակով:

«Փոքր ժամանակ, ես Շանթի ծրագրեր կարող եմ նշել, որ բում են եղել, «Որոգայթ» կինոն, որ ցույց էր տալիս, նայում էր ամբողջ Հայաստանը, մենք բակում խաղալուց բարձրանում էինք տուն նայելու, ծրագրերը այն ժամանակ հետաքրքիր էին, որովհետև նոր էին, շատ գրավիչ էր: Հիմա «Վերվարածների» շարունակությունն են ցույց տալիս,, փոքր ժամանակ դա շատ հետաքրքիր էր, հիմա որ նայում ես, շատ տափակ է, ժամանակները փոխվում են, պետք է դրա հետ քայլել: Ինձ թվում է Շանթը կաղում է:»

(արական սեռ, ուսանող)

Ուսուցողական և ճանաչողական հեռուստալիքի դուրսբերում: Քննարկման ընթացքում առաջ քաշված հարցադրումները թույլ են տալիս դուրս բերել երիտասարդների համար առավել ուսուցողական և ճանաչողական հեռուստալիքները: Ըստ էության, կարող ենք ասել, որ իբրև այդպիսին առանձնացվել են Առաջին ալիքը, Արմենիան, ու Շանթը, սակայն, եթե վերջին երկուսի դեպքում նշվել են ոչ թե հեռուստալիքն, այլ հստակ հաղորդումները, ապա Առաջին ալիքի դեպքում առանձնացվել է ընդհանուր հեռուստալիքը՝ իբրև ուսուցողական և կրթող: Արմենիա հեռուստալիքի դեպքում առանձնացվում է երկու հաղորդում՝ «Ամենախելացին» և «Ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ»-ը իբրև հեռուստանախագծեր, որոնցից հնարավոր է սովորել և նոր գիտելիք ստանալ: Շանթ հեռուստաընկերության պարագայում «ուսուցողական» ասելով երիտասարդները նկատի ունեն հիմնականում երաժշտական ճաշակի և ոճի ձևավորումը՝ մատնանշելով Շանթի մի շարք երաժշտական նախագծեր: Վերջիններս նպաստել են երաժշտական տարբեր ժանրերի ներկայացմանն ու տարածմանը երիտասարդների շրջանում: Առաջին ալիքին անդրադառնալիս՝ երիտասարդները խոսում են ավելի ընդհանրական:

Այսպես, Առաջին ալիքը համարվում է ամենաուսուցողական և ամենագրագետ հեռուստաալիքը: Նրան են վերագրվում են գրագետ խոսքի տարածման գործառույթը, քանի որ Առաջինի եթերում առկա է միայն գրագետ խոսք, ինչպես նաև սա լավագույն ալիքն է բարձ որակի թարգմանված ֆիլմեր դիտելու համար: Միևնույն ժամանակ, այս հեռուստաալիքի հաղորդավարների խոսքը հաճախ ուսուցողական դեր է կատարում երիտասարդների համար՝ սովորեցնելով նոր բառեր: Բացի գրագետ խոսքից Առաջին ալիքի հեռուստանախագծերն իրենց բնույթով համարվում են տեղեկատվություն տրամադրող և կրթող հաղորդումներ:

Ասոցացիաներ հեռուստաալիքների հետ: Քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել ասոցացիաներին, որոնք կապված են նշված երեք հեռուստաալիքների հետ: Ստորև ներկայացված են յուրաքանչյուր հեռուստաալիքի հետ կապված երիտասարդների ասոցացիաները:

Առաջին ալիք: Առաջին ալիքի մասին խոսելիս երիտասարդները նշում են տարբեր ասոցացիաներ, սակայն բոլորի խոսքի մեջ կարելի է նկատել մեկ ընդհանրություն. Առաջին ալիքը բոլորի կողմից ընկալվում է իբրև մշակութային և ազգային հեռուստաալիք: Առաջին ալիքի վերաբերյալ կարծիքները կարելի է բաժանել երկու խմբի. Առաջին խմբի մեջ ներառված են այն մարդիկ, ովքեր գտնում են, որ այս հեռուստաալիքը չունի ոչ մի գրավիչ հաղորդում: Պետք է նշել, որ այս խմբին պատկանող մարդիկ վերջին անգամ Առաջին ալիքը դիտել են մի քանի տարի առաջ: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ կարող ենք ասել, որ նրանց կարծիքը Հանրային հեռուստաընկերության մասին ձևավորվել է դեռևս մի քանի տարի առաջ և մինչ օրս մնացել է անփոփոխ: Ստացվում է, որ երիտասարդների մի մասի մոտ Առաջին ալիքի վերաբերյալ պատկերացումները ձևավորվել է հին եթերաշրջանի հիման վրա և այսօր տարածվում է նոր եթերաշրջանի վրա ևս: Այս երևույթի պատճառը կարող է լինել այն, որ երիտասարդները բավարար չափով տեղեկացված չեն ներկայիս եթերացանկի մասին, կամ էլ այն գրավիչ ձևով չի մատուցվում, չի գրավում երիտասարդներին, որպեսզի նրանք սկսեն դիտել Առաջին ալիքը: Սա երևում է երիտասարդների մեջ ծավալված քննարկումներից և վերջիններիս մեկնաբանություններից Առաջին ալիքով չհետաքրքրվելու կամ չդիտելու վերաբերյալ:

«Ես երևի 3-4 տարի է Հանրային 3 բոպեից ավել նայած չկամ, ոչ մի հետաքրքիր բան, նույնիսկ լուրերի առումով ինձ Արմենիայի լուրերն ավելի են դուր գալիս: Այս պահին չգիտեմ էլ Հ1-ով ինչ կա: Կատեգորիկ չեմ նայում: Հետաքրքրություններս կորել է»:

(արական սեռ, ուսանող)

Երկրորդ խմբի երիտասարդները Առաջին հեռուստաալիքը որակում են իբրև զարգացնող, ինտելեկտուալ, ուսուցողական հաղորդումներով հարուստ հեռուստաալիք, որտեղից հնարավոր է ստանալ մեծ ծավալի տեղեկատվություն: Այս երիտասարդները խոսում են Առաջին ալիքի եթերացանկի հստակ փոփոխության մասին՝ նշելով, որ եթե այն նախկինում կարելի էր համարել հեռուստասերիալների ալիք, քանի որ հիմնականում հեռուստասերիալներ էին ցուցադրվում, ապա այսօր Առաջին ալիքի եթերացանկում կարելի է նկատել զգալի փոփոխություններ. այն դարձել է, ինչպես նշում են քննարկմանը մասնակցած երիտասարդները, «ավելի պատմական», «մշակութային», «ազգային»:

Երիտասարդներն Առաջին ալիքն ասոցացնում են հիմնականում գեղարվեստական ֆիլմերի, Նոր տարու, Եվրատեսիլի, ինտելեկտուալ հաղորդումների հետ: Գեղարվեստական ֆիլմերի հետ ասոցացումը համեմատաբար նոր երևույթ է, քանի որ պայմանավորված է եթերացանկում գեղարվեստական ֆիլմերի առկայությամբ: Նոր տարվա հետ ասոցացիաներն ունեն նոստալգիկ բնույթ, քանի որ եկել են հին ժամանակներից, երբ մարդիկ Ամանորի գիշերը միշտ միացնում էին Առաջին ալիքը նոր տարին դիմավորելու համար: Քննարկումներից կարող ենք ասել, որ այդ սովորությունը դեռևս շարունակվում է: Եվրատեսիլի հետ Առաջին ալիքի ասոցացումը երիտասարդների կողմից պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջինս թողարկվում է միայն Առաջին ալիքով: Վերջին շրջանում Առաջին ալիքի եթերացանկին հետևող երիտասարդներն այս ալիքը ասոցացնում են նաև ինտելեկտուալ հաղորդումների հետ:

Քննարկման ընթացքում պարզ դարձավ, որ Առաջին ալիքի լուրերի վերաբերյալ երիտասարդներն ունեն միևնույն կարծիքը. մասնակիցները գտնում են, որ Առաջին ալիքով ցուցադրվող լուրերն ամբողջությամբ չեն արտացոլում

հասարակության մեջ տեղի ունեցող իրադարձությունները: Սա գիտակցելով հանդերձ՝ երիտասարդները նշում են, որ այդպես էլ պետք է լինի, քանի որ Առաջին ալիքը ներկայացնում է երկրի դեմքը և չի կարող ցույց տալ կամ մեկնաբանել մի շարք իրադարձություններ, որոնք տեղի են ունենում հասարակության մեջ: Երիտասարդների կարծիքով այլ քաղաքականության առկայությունը նպատակահարմար չէ նաև արտաքին քաղաքականության համար. Առաջինը պաշտոնական հեռուստաալիք է, որին հետևում են արտասահմանցիները, ինչպես նաև թշնամի երկրները: Այս տեսանկյունից երիտասարդների համար Առաջին ալիքի նման մոտեցումը լուրերին արդարացված է:

Արմենիա: Խոսելով Արմենիա հեռուստաալիքի մասին՝ երիտասարդները հիմնականում շեշտադրում են, որ Արմենիան նախկինում իրենց կողմից սիրված ու հետաքրքիր հեռուստաալիք է եղել, սակայն այսօր դարձել է անհետաքրքիր հեռուստաալիք: Արմենիայի հետ հիմնականում ասոցացվում են սերիալները, ժամանցային ծրագրերը, սիթքոմները, «Սուր անկյուն» հաղորդումը: Քննարկված երեք հեռուստաալիքներից միայն Արմենիա հեռուստաալիքն է, որի հետ երիտասարդների մոտ առկա է անձնավորված ասոցացիա. Արմենիան ասոցացնում են Նազենի Հովհաննիսյանի և Դիանա Գրիգորյանի հետ: Պետք է նշել, որ եթե Նազենի Հովհաննիսյանի հետ ասոցացիան դրական է, ապա Դիանա Գրիգորյանի պարագայում այն բացասական է: Նազենի Հովհաննիսյանն ասոցացվում է Արմենիա հեռուստաալիքի հետ իբրև այդ ալիքի եզակի գրագետ հաղորդավարներից մեկը, ով ունի ճիշտ բանավոր խոսք: Դիանա Գրիգորյանն ասոցացվում է իբրև սերիալների հեղինակ, ինչը բացասական է ընկալվում երիտասարդների կողմից: Արմենիա հեռուստաընկերության հետ առկա բացասական ասոցացիայի հիմքում ընկած է նաև «Սուր անկյուն» հաղորդումը, որը երիտասարդների կարծիքով ագրեսիվ բնույթ ունի և վատ է ազդում մարդկանց վրա: Մի խումբ երիտասարդների կողմից Արմենիան որակվում է իբրև ագրեսիվ հեռուստաալիք:

Դրական ասոցացիաները պայմանավորված են ժամանցային և ինտելեկտուալ ծրագրերով, մասնավորապես շեշտադրվում է «Ամենախելացին» և «Ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ» հաղորդումները, որոնք ունեն նաև ուսուցողական բնույթ:

Շանթ: Շանթ հեռուստալիքի հետ ասոցացիաները երիտասարդների շրջանում կապված են Շանթում ցուցադրվող երաժշտական նախագծերի, հնդկական սերիալների, սիթքոմների և ժամանցային ծրագրերի հետ: Երաժշտական նախագծերը երիտասարդների կողմից որակվում են իբրև Շանթի հետ կապված դրական ասոցացիա: Այսօր, սակայն, նման նախագծերի փոխարեն հիմնականում հնդկական սերիալներ են, որոնք դարձել են Շանթ հեռուստալիքի եթերացանկի հիմնական բաղադրիչը: Երիտասարդներից մեկն այսպես է նշում.

«Վերջին տարին Շանթն ինձ մոտ ասոցացվում է հնդկական սերիալների հետ, որովհետև երբ տեսել եմ ինչ-որ տեղ միացրած Շանթ, միշտ հնդկական սերիալ է, այսինքն՝ հիմնականում հասարակությունը Շանթ նայում է հնդկական սերիալի համար»

(իգական սեռ, աշխատող)

Շանթի հետ կապված ասոցացիաների մասին խոսելիս՝ երիտասարդները նշում են նաև այս հեռուստալիքի լուրերը, որոնք իրենց կարծիքով ամենաօբյեկտիվն են լուսաբանում տեղի ունեցող իրադարձությունները: Մասնակիցների մոտ բացասական ասոցացիաներ են նկատվում Շանթի եթերացանկում նախորդ հաղորդումների կրկնությունների հետ. այս հաղորդումները, մասնավորապես «Վերվարածներ» հումորային սերիալը, որակավորվում են իբրև ժամանակավրեպ և այսօրվա համար անհետաքրքիր:

Հեռուստալիքների լսարանի նկարագրություն: Ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել Արմենիա, Առաջին ալիք և Շանթ հեռուստալիքների լսարանների նկարագրությանը, որը դուրս է բերվել քննարկման մասնակիցների հետ: Վերջիններս, ելնելով իրենց դիտարկումներից և սեփական փորձից, նկարագրել են յուրաքանչյուր հեռուստալիքի լսարանը: Ստացված տվյալների համաձայն՝ Առաջին ալիքի հանդիսատեսը հիմնականում միջին և միջինից բարձր տարիքի մարդիկ են, ովքեր ունեն որոշակի հիշողություններ՝ կապված Առաջին ալիքով ցուցադրվող հաղորդումների բովանդակության հետ: Այսպես, «հիշողություններ արթնացնող» հաղորդումների շարքում հիշատակվում են

«Երգ երգոց»-ն ու «Երաժշտական փոստարկղ»-ը: Երիտասարդների կողմից Առաջին ալիքի լսարանը նկարագրվում է իբրև կրթություն ստացած, զարգացած և մշակույթով հետաքրքրվող մեծահասակների խումբ: Արմենիան համարվում է առավել երիտասարդական և դեռահասներին հետաքրքրող հեռուստաալիք: Այս ալիքով ցուցադրվող հաղորդումները, հեռուստասերիալներն ու սիթքոմներն առավել հետաքրքիր են երիտասարդներին և դեռահասներին: Հեռուստասերիալներում ցուցադրվող շեղվող վարքը գրավում է երիտասարդներին, շատ հաճախ նրանք նույնիսկ ցանկանում են որևէ կերպ նմանվել հեռուստասերիալների հերոսներին: Երիտասարդների համար այս ալիքը գրավիչ է իր թեթև հումորային և ժամանցային հաղորդումներով: Համեմատելով Առաջին ալիքն ու Արմենիան՝ մասնակիցը նշում է.

«Ես միշտ Հ1-ը պատկերացնում եմ փողկապով, իսկ Արմենիան ավելի գունավոր, ժամանակակից»:

(իգական սեռ, ուսանող)

Այսպես, եթե Առաջին ալիքն ավելի շատ մեծահասակների համար է, իսկ Արմենիան՝ երիտասարդների ու դեռահասների, ապա Շանթն իր եթերացանկի բազմազանությամբ գրավում է և՛ երիտասարդներին, և՛ մեծահասակներին: Մասնակիցները նշում են, որ Շանթում առկա են ժամանցային ծրագրեր, որոնք գրավիչ են երիտասարդների համար, և հնդկական սերիալներ, որոնք առավել հետաքրքրում են միջին տարիքի մարդկանց ու մեծահասակներին:

Այսպիսով, համեմատելով այս երեք հեռուստաալիքների հանդիսատեսի մասին երիտասարդների պատկերացումները՝ կարող ենք ասել, որ չնայած այն հանգամանքին, որ երիտասարդները նշում են Առաջին ալիքի եթերացանկի ինտելեկտուալ լինելը, այն բավարար չափով գրավիչ չէ երիտասարդների համար: Այս հեռուստաալիքի լսարանը բաղկացած է կրթված մեծահասակներից: Երիտասարդների համար Առաջին ալիքի ոչ գրավիչ լինելու մի քանի պատճառներ են առանձնացվում՝ չհիշվող և չտպավորվող հաղորդումներ, «հին» հեռուստաալիք: Մասնակիցների միջև ծավալված քննարկումները թույլ են տալիս ենթադրել, որ հաղորդումներն իրենց համար տպավորիչ ու ժամանակակից չեն: Սա վառ երևում է

հատկապես «Գուշակիր մեղեդին» հաղորդման մասին ծավալված քննարկումից, որտեղ երիտասարդներից մեկը նշում է.

«Բայց էդ ծրագիրը, եթե նստես տատիկիդ հետ նայես, տատիկդ ավելի շատ կասի, քան դու, մի քիչ ավելի հին է: Երգերն էլ հին են»:

(արական սեռ, ուսանող)

Երիտասարդների կողմից Առաջին ալիքն ընկալվում է իբրև հին և մեծահասակների մոտ հիշողություններ արթնացնող հեռուստաալիք և ոչ մի կերպ չի ասոցացվում երիտասարդների հետ: Ամփոփելով այս երեք հեռուստաալիքների հետ ասոցացիաները՝ մասնակիցը նշում է.

«Չգիտեմ ինչի, եթե ինձ ասեն ալիքների սեռը ասա, ես Արմենիային կտամ որպես աղջիկ, Շանթին՝ տղա, իսկ Հ1-ին՝ որպես կայացած, խելացի տղամարդ»:

(իգական սեռ, աշխատող)

Առաջին ալիքն իբրև հանրային հեռուստաալիք: Առաջին ալիքի կերպարի դուրսբերման նպատակով անդրադարձ է կատարվել Առաջին ալիքի՝ իբրև հանրային հեռուստաալիքի քննարկմանը, մասնավորապես այն հարցին, թե որքանով է Առաջին ալիքն իբրև հանրային հեռուստաալիք կատարում իր գործառույթները: Երիտասարդների կողմից բոլոր քննարկումների ընթացքում շեշտադրվում էր Առաջինի հանրային լինելու հանգամանքը: Ավելին, շատ յուրահատկություններ կամ խնդիրներ, որոնք նշվում էին երիտասարդների կողմից Առաջին ալիքի վերաբերյալ հենց իրենց կողմից էլ արդարացվում էին այն մեկնաբանությամբ, որ սա հանրային հեռուստաալիք է և հենց այդպես էլ պետք է լինի: Մասնավորապես բազմիցս անդրադարձ է կատարվել Առաջին ալիքի լուրերին, որոնք երիտասարդների կողմից ընկալվում են իբրև սուբյեկտիվ մեկնաբանություն ունեցող և հասարակության մեջ վստահություն չվայելող: Միևնույն ժամանակ երիտասարդների որոշ մասի կողմից սա արդարացվում է, քանի որ հանրային հեռուստաալիքը պետք է ունենա որոշակի սահմաններ և հետևի դրանց. այն դիտում են ոչ միայն հայերը, այլև արտասահմանի մարդիկ՝ իբրև պաշտոնական հեռուստաալիք: Միևնույն ժամանակ, երիտասարդները

նշում են, որ Առաջին ալիքի լուրերից ակնկալում են տեղեկատվության տրամադրում ոչ միայն Հայաստանի, այլև աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ: Այս առումով Առաջին ալիքը կաղում է, քանի որ տրամադրած տեղեկատվությունը բավարար չէ:

Երիտասարդների կողմից շեշտվում է նաև Առաջին ալիքի համեմատաբար «ֆինանսական ազատությունն» այն տեսանկյունից, որ կարող է ցուցադրել ոչ թե այն, ինչ սպառվում է հասարակության կողմից, ինչպես դա անում են մյուս հեռուստաալիքները, այլ այն ինչը որակյալ է. Առաջին ալիքն ի տարբերություն այլ հեռուստաալիքների չունի ֆինանսավորման խնդիր: Սա էլ հաճախ Առաջին ալիքը հստակ տարբերակում է այլ հեռուստաալիքներից: Սա վառ երևում է մասնակիցների հետևյալ խոսքի մեջ.

«Շանթն ու Արմենիան նման են իրար, Հ1-ը՝ չէ: Չնայած Շանթն ու Արմենիան առաջատար են դառնում Հ1-ից, իրենք կորպորատիվ են ավելի շատ: Մեր հասարակությունը թելադրում է դա… Հ1-ը ցուցադրում է այն, ինչ գտնում է ճիշտ, բայց դա հետևորդ չունի մասսայական»:

(Արական սեռ, աշխատող)

Առաջին ալիքը չունի դիտումների քանակից ֆինանսավորում ստանալու խնդիր և դա է պատճառը, որ ցույց է տալիս ոչ թե այն ինչ հիմնականում սպառվում է հասարակության կողմից, այլ այն, ինչ ճիշտ է գտնում, չնայած այն հանգամանքին, որ զանգվածային հետաքրքրություն չի առաջացնում: Երիտասարդների կարծիքով, սակայն, Առաջին ալիքը որպես հանրային հեռուստաալիք ունի կրթելու գործառույթ և ոչ թե զանգվածային դիտումներ ապահովելու: Այս տեսանկյունից կարելի է ասել, որ Հանրային հեռուստաընկերությունն իր գործառույթն իրականացնում է:

Ամփոփում և առաջարկներ

Հետազոտության ընթացքում իրականացված ֆոկուս խմբային քննարկումների արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունները՝

- Երիտասարդների շրջանում ընդհանուր առմամբ առկա է դժգոհություն այսօրվա հեռուստաալիքների եթերացանկի հետ կապված, որի արդյունքում նրանք չունեն սիրելի հեռուստաալիք, այլ ընտրում են եղածների մեջ իրենց համար քիչ թե շատ հետաքրքիրը: Վերջիններիս շարքում հիմնականում առանձնացվում են Առաջին ալիքը, Արմենիան ու Շանթը:
- Արմենիա ու Շանթ հեռուստաալիքները շարունակում են լինել դոմինանտ Առաջին ալիքի հետ համեմատած, սակայն երիտասարդների մոտ կարելի է նկատել հետաքրքրության նվազում այս հեռուստաալիքների նկատմամբ և փոխարենը հետաքրքրության ավելացում Առաջին ալիքի հանդեպ: Ըստ էության, Արմենիա և Շանթ հեռուստաալիքները շարունակում մնալ դոմինանտ հին և երիտասարդների կողմից սիրված հեռուստանախագծերի մասին հիշողություններին շնորհիվ: Այս նույն սկզբունքով Առաջին ալիքի նկատմամբ փոքր է հետաքրքրությունն այն երիտասարդների մոտ, ովքեր Առաջին ալիքը վերջին անգամ դիտել են մի քանի տարի առաջ: Միևնույն ժամանակ այն երիտասարդները, ովքեր այսօր հետևում են Առաջին ալիքի եթերացանկին նշում են վերջինիս ակնհայտ և իրենց կողմից դրական գնահատվող փոփոխությունը: Ստացվում է, որ Առաջին ալիքի փոփոխությունները նկատում են միայն այն մարդիկ, ովքեր շարունակում են հետևել այս հեռուստաալիքին, իսկ նրանք, ում համար նախկին եթերացանկը գրավիչ չի եղել շարունակում են նախկինում ձևավորված, իսկ այսօր կարծրատիպ դարձած պատկերացումները տարածել Առաջին ալիքի ներկայիս եթերացանկի վրա: Այս տեսանկյունից նպատակահարմար է ներկայիս եթերացանկի մասին

տեղեկատվության տարածման տարբեր գործիքների կիրառում, ինչպես նաև թիրախավորված տեղեկատվական արշավների կազմակերպում:

- Այսօր երիտասարդների համար առավել ճանաչողական և ուսուցանող հեռուստաալիք համարվում է Առաջին ալիքը: Առանձնացվում են նաև Շանթի և Արմենիա հեռուստաալիքների որոշ հաղորդումներ (մասնավորապես երաժշտական հաղորդումները Շանթի դեպքում, «Ամենախելացին» ու «Ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ»-ը՝ Արմենիայի դեպքում), սակայն ոչ հեռուստաալիքներն ամբողջությամբ: Առաջին ալիքի պարագայում ճիշտ հակառակ երևույթն է նկատվում. ընդհանուր հեռուստաալիքն է համարվում ինտելեկտուալ, ուսուցողական և տեղեկատվությունով հարուստ, սակայն չեն մատնանշվում հստակ հաղորդումներ:
- Առաջին ալիքն ասոցացվում է գեղարվեստական ֆիլմերի, Նոր տարու, Եվրատեսիլի, ինտելեկտի, կրթվածության, պատմականի և հնի հետ: Արմենիա հեռուստաալիքն ասոցացվում է ժամանցային ծրագրերի, սիթքոմների, «Սուր անկյուն» հաղորդման, սերիալների, Նազենի Հովհաննիսյանի և Դիանա Գրիգորյանի հետ: Շանթ հեռուստաընկերությունն ասոցացվում է երաժշտական նախագծերի, հնդկական սերիալների հետ: Պետք է նշել, որ եթե Արմենիա ու Շանթ հեռուստաընկերության դեպքում երիտասարդների կողմից նշվում են ինչպես դրական, այնպես էլ բացասական ասոցացիաներ, ապա Առաջին ալիքի դեպքում բացասական ասոցացիաները բացակայում են: Միևնույն ժամանակ, Առաջին ալիքը, համարվելով ինտելեկտուալ, մշակութային և կրթող, կարծես օտարված լինի հասարակությունից:
- Երիտասարդների պատկերացումներին Առաջին ալիքի հանդիսատեսը միջին կամ միջինից բարձր տարիքի կրթված և ինտելեկտուալ մարդիկ են, ովքեր ոչ միայն ունակ են հասկանալ և գնահատել եթերացանկում ակա հաղորդումները, այլև վերապրել և վերհիշել իրենց անցյալն այդ հաղորդումների շնորհիվ: Երիտասարդների համար Առաջին ալիքը գրավիչ չէ իր «հնությամբ» և ժամանցային թեթև ծրագրերի

սակավությամբ: Երիտասարդները երեկոյան ժամերին վերադառնալով տուն նախընտրում են ավելի շատ թեթև հաղորդումներ դիտել հանգստանալու համար: Այս տեսանկյունից նպատակահարմար կլինի վերանայել Առաջին ալիքի եթերացանկը և՛ բովանդակային, և՛ ժամային տեսանկյունից: Հանրային հեռուստաալիքն առավել շահեկան վիճակում կլինի, եթե երեկոյան ժամերին իր եթերացանկում ավելացնի առավել ժամանցային բնույթ կրող հաղորդումներ, որոնք տեղեկատվությունը կտրամադրեն առավել խաղային կամ մրցութային ձևով: Սա կգրավի երիտասարդներին իր թեթևությամբ և միևնույն ժամանակ կփոխանցի որոշակի տեղեկատվություն:

- Երիտասարդական ալիք համարվում է Արմենիա հեռուստաալիքը, որը գրավիչ է իր ժամանցային ծրագրերով: Միևնույն ժամանակ, Արմենիայի ժամանցային հաղորդումները դառնում են անորակ, իսկ Շանթ հեռուստաընկերության եթերացանկում գերիշխում են նախկինում ցուցադրված հաղորդումների կրկնությունները, որոնք այսօր արդեն հետաքրքիր չեն: Նման պայմաններում երիտասարդներն ունեն որակյալ ժամանցային ծրագրերի կարիք, որոնց թողարկմամբ Առաջի ալիքը կարող է «մեծահասակների հեռուստաալիք»-ից վերածվել «երիտասարդական հեռուստաալիք»-ի:
- Քննարկումների արդյունքում ստացված տվյալների հիման վրա կարող ենք ասել, որ երիտասարդների պատկերացումներն Առաջինի՝ իբրև հանրային հեռուստաալիքի մասին ու վերջինիս գործունեությունն ընդհանուր առմամբ համընկնում են: Առաջին ալիքի լուրերը շարունակում են համարվել «կաղապարված» այն առումով, որ հանրային հեռուստաալիքը իբրև պաշտոնական ալիք չի կարող լուսաբանել այն ամենն ինչ կատարվում է հասարակության մեջ՝ ելնելով արտաքին քաղաքականությունից: Երկրի և հասարակության մեջ տեղեկատվության տրամադրման հիմնական աղբյուրն արտասահմանի համար հանդիսանում է Հանրային հեռուստաընկերությունը: Այս տեսանկյունից Առաջին ալիքի մոտեցումը լուրերի մեկնաբանմանն

արդարացված է համարվում երիտասարդների կողմից, սակայն իրենց համար չի ծառայում իբրև նորություններին ծանոթանալու և տեղեկատվություն ստանալու հիմնական աղբյուր: Հարկ է նշել, որ չնայած ավելի քիչ, քան նախկինում, այնուամենայնիվ լուրերի ազդեցությունը դեռևս առկա է երիտասարդների կողմից Առաջին ալիքի կերպարի ընկալման գործընթացում: